ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	Կրծքանշանն իրենից ներկայացնում է օվալաձև՝ ուռուցիկ մակերեսով շրջանակ, ընդհանուր ֆոնը՝ սպիտակ: Կրծքանշանի երկարությունը 60 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 45 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, իսկ ներքևի հատվածում՝ կենտրոնում, պատկերված է Հայաստանի Հանրապետության դրոշը:Կրծքանշանը եզրագծված է 10 մմ լայնությամբ արծաթագույն դափնեպսակով: Կրծքանշանի միջնամասում՝ ամբողջ լայնությամբ (ձախից աջ) պատկերված է Հայաստանի Հանրապետության ծածանվող դրոշը: Կրծքանշանի կենտրոնում՝ դրոշի վրա, 30 մմ տրամագծով կապույտ ֆոնի վրա պատկերված է շրջանակ: Շրջանակի եզրագծով՝ վերևի հատվածում գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ»,

				ներքևի հատվածում՝ «ՓՐԿԱՐԱՐ» բառերը: Շրջանակի կենտրոնում գտնվող 20 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կապույտ շրջանակում զետեղված է արծիվ և ութաթև աստղ: Արծվի և շրջանակի եզրագծի ներքևի հատվածում գրված «ՓՐԿԱՐԱՐ» բառի միջնամասում նշված է հռոմեական «III» թիվը: Կրծքանշանի դարձերեսին լազերային եղանակով դաջվում է կրծքանշանի հերթական համարը /սկսած 001-ից/: Կրծքանշանը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Կրծքանշանի արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է կրծքանշաների բարձր որակը և ճշգրիտ չափսերը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը պետք է լինի ոչ ավել քան 0.1 մմ: Պատրաստի կրծքանշանի վրա չի թույլատրվում ՝ Պատկերների և գրվածքների աղավաղում: Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր:Մատակարարը կրծքանշանների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մատակարարը ապրանքը գնելուց առաջ համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
4				